Հավելված
Քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2022 թվականի հունվարի 7 -ի N02-Ա/13 հրամանի

ԾՐԱԳԻՐ

Քաղաքաշինության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների

Փորձագետի ներգրավման դեպքը և հիմնավորումները

Հաշվի առնելով Քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կատարման պատասխանատվությամբ նախատեսված բյուջետային ծրագրային ծախսերի ավելացման հետևանքով Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության (այսուհետ՝ Վարչություն) 2022 թվականին կատարման ենթակա աշխատանքների ծավալների ավելացումը և Վարչության չհամալրված աշխատատեղերի առկայությունը, անհրաժեշտություն է առաջացել պայմանագրային հիմունքներով ներգրավել համապատասխան փորձագետի:

Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է մինչև մեկ տարի ժամկետով:

Փորձագետին ներկայացվող պահանջները

1) Հաշվապահական հաշվառում և աուդիտ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն.
2) հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ.
3) իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն.
4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Ծրագրի ակնկալվող արդյունքը

Վարչությանը վերապահված առկա խնդիրների լուծման շրջանակներում փորձագետը իրականացնելու է ծրագրով նախատեսված հետևյալ աշխատանքները՝

1. պարբերաբար իրականացնում է Client-TREASURY ծրագրային համակարգով կատարված էլեկտրոնային վճարային գործարքների վերաբերյալ արտահանված տեղեկատվության հաշվարկային (կատարողական) փաստաթղթերի հաշվեգրված տվյալների հետ համադրման, ճշտության ու համապատասխանության ստուգման աշխատանքներ (շարունակական),

2. իրականացնում է հաշվապահական հաշվառման էլեկտրոնային համակարգում (ՀԾ) կատարված գործառնությունների ուսումնասիրություններ և անճշտությունների բացահայտումներ (շարունակական),
3. ընտրանքային կարգով իրականացնում է հաշվապահական հաշվառման էլեկտրոնային համակարգում (ՀԾ) հաշվառված հիմնական միջոցների փաստացի առկայության, գտնվելու վայրի ստուգման և ուսումնասիրման աշխատանքներ (շարունակական):

<u>Աշխատանքի գնահատման չափանիշները</u>

Աշխատանքի արդյունքները ներկայացվում են ամփոփ հաշվետվության ձևով, որում ներառված ստորև ներկայացված բաղկացուցիչները հանդիսանում են գնահատման առարկա և չափանիշ՝

1) Client-TREASURY ծրագրային համակարգով կատարված էլեկտրոնային վճարային գործարքների վերաբերյալ արտահանված տեղեկատվության հաշվարկային (կատարողական) փաստաթղթերի հաշվեգրված տվյալների հետ համադրման և ստուգման արդյունքների վերաբերյալ եզրակացություն,
2) հաշվապահական հաշվառման էլեկտրոնային համակարգում (ՀԾ) կատարված գործառնությունների ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա ներկայացվող հաշվետվություն և վերաձևակերպումների առաջարկություններ,
3) հաշվապահական հաշվառման էլեկտրոնային համակարգում (ՀԾ) հաշվառված հիմնական միջոցների փաստացի առկայության, գտնվելու վայրի ստուգման և ուսումնասիրման արդյունքների հիման վրա ներկայացվող հաշվետվություն և փաստաթղթային կարգավորման առաջարկություններ,

<u>Հաշվետվությունների ներկայացման և դրանց գնահատման արդյունքների ամփոփիչ ժամկետները</u>

Փորձագետն ամփոփ հաշվետվությունը ներկայացնում է

- ծրագրի ավարտից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում, որը գնահատվում է ավարտական փուլով:
- Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

Տեղեկատվություն

Քաղաքաշինության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչությունում փորձագետ ներգրավելու համար դիմած և պայմանագիր կնքած անձի մասին

N	**Պաշտոնի անվանում**	**Դիմողի անուն, հայրանուն, ազգանուն**	**Պայմանագիր կնքած անձի անուն, հայրանուն, ազգանուն**
1.	Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության փորձագետ	Սուսաննա Թորգոմի Զաքոյան	Սուսաննա Թորգոմի Զաքոյան

17.01.2022թ.